ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

«Տեղեկագիր» № 5—6 (10—11), Երևան, 1941 թ.

Տ. Ս. Տեր-Սահակյան

# ԿԱՐՏՈՖԻԼԻ ՄԻԵՎՆՈՒՅՆ ՊԱԼԱՐԸ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՑԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Նախնական հաղորդում)

*Կարտոֆիլի պալարը սովորաբար ցանվում է մեկ անգամ, գարնանը կամ ամռանը և բերքը հավաքվում է ամառվա կեսերին — հուլիսին կամ աշնանը։*

*Հուլիսյան բերքահավաքը հնարավորություն է տալիս առողջ մնացած մայրական պալարները նույն տարվա ամռանը նորից ցանել։ Աշնան բերքահավաքի դեպքում մայրական պալարները սովորաբար նեխած են լինում հողի մեջ։ Բացի դրանից, պալարներից շատերը փայտացած, վարակված են լինում զանազան հիվանդություններով։ Այդ պալարները ձմռանը պահելու ժամանակ հեշտությամբ նեխում են։ Կարտոֆիլի աշնան բերքահավաքի դեպքում մայրական պալարները սովորաբար թողնվում են դաշտում։*

*Կարտոֆիլի նախորդ տարվա գարնանացանի պալարները, հատկապես յարովիզացիայի ենթարկվածները, գարնանը կամ ամռանը ցանելու դեպքում, զարգացնում են իրենց աչքերի զգալի մասը. յուրաքանչյուր պալար ունի, միջին հաշվով, 10-ից մինչև 12 աչք, որոնցից սովորաբար զարգանում են 4—6-ը, իսկ յարովիզացիայի դեպքում՝ ավելի շատ, ըստ որում մի աչքից շատ անգամ երկու ծիլ է ստացվում։ Սրա հետևանքն այն է լինում, որ պալարի սննդանյութերը ծախսվում են շատ ինտենսիվ և պալարն անպետքանում է ու մեռնում (3, 5։)*

*Հայտնի է, որ ցանած կարտոֆիլի պալարի մատղաշ ծիլն սկզբում սընվում է մայրական պալարի սննդանյութերով, իսկ երբ ծիլն արմատակալում է և հողի երեսին հայտնվում է մատղաշ ցողունն իր կանաչ տերևներով, կարտոֆիլի բույսն սկսում է սնվել ինքնուրույն կերպով։*

*Պարզվել է, որ Միությանն հարավային շրջաններում կարտոֆիլ կարելի է ցանել երկու անգամ (1, 2, 4)— վաղ գարնանը և ամռանը։ Վաղ գարնանը ցանած կարտոֆիլի բերքը հավաքվում է հուլիսի 10-ից, հավաքած թարմ պալարները հատուկ ձևով ծլեցվում են և ապա ցանվում համապատասխան ձևով մշակված հողում։*

*Մեր դիտողությունները ցույց են տվել, որ թարմ պալարը մեծ մասամբ տալիս է միայն մեկ ծիլ՝ իր գագաթի վրա գտնվող երիտասարդ աչքերից մեկից։*

*Նորմալ պայմաններում ծլած պալարը դառնալով մայրական, նրանից դուրս եկած ծիլը տալիս է արմատներ։ Իսկ հետագայում ծիլն աճում ու*

ճեղքում է հողը և տալիս է ուժեղ, ճյուղավորված ցողուն՝ տերևային մեծ մակերեսով։

Աշնանը, կարտոֆիլի երկրորդ բերքը հավաքելու ժամանակ մայրական պալարն ունենում է այնպիսի վիճակ, որը հիմք է տալիս ենթադրելու, թե



Նկ. 1. Մայրական պալարից ստացված բույսը (նկարահանված է 1940 թ. հունիսի 15-ին)

նրա սննդանյութերը բույսի վեգետացիայի ժամանակ օգտագործվում են համեմատաբար շատ սահմանափակ չափով։ Այդպիսի մայրական պալարի գրեթե բոլոր աչքերը հողի մեջ գտնվում են հանգստի վիճակում և եթե աշնան բերքահավաքի ժամանակ պալարն առողջ է լինում, ապա իբրև կանոն, կարելի է այն նորից օգտագործել հաջորդ գարնանը ցանելու համար։ Երիտասարդ պալարներով կատարած ամռան ցանքից ստացված մայրական պալարը երկրորդ անգամ օգտագործելու հնարավորությունը պարզելու համար, 1940 թ. գարնանը մենք փորձ դրինք Արմֆանի Բիոլոգիական Ինստիտուտի Բույսերի Գենետիկայի Սեկտորի Փորձադաշտում։ Համեմատության համար փորձի մեջ մտցրինք կարտոֆիլի «Լորիս» սորտի հետևյալ ռեպրոդուկցիաները.

1. 1939 թ. ամռանը երիտասարդ պալարներով կատարված ցանքից ստացված մայրական պալարները։

2. 1939 թ. գարնան ցանքից ստացված պալարները։

3. 1939 թ. ամռանը երիտասարդ պալարներով կատարած ցանքից ստացված պալարները։

*Փորձը դրվել է հողային միատեսակ պայմաններում։ Ցանքի ոռոգումը կատարվել է միևնույն ձևով։ Ցանքը կատարվել է բահով, 1940 թ. ապրիլի 1-ին։ Կարտոֆիլի ծիլերը երևալու և ծաղկելու ժամանակը ցույց է տրված № 1 աղյուսակում։*

*Անհրաժեշտ է նշել, որ մայրական պալարների բույսերը գարնանը միանգամայն առողջ տեսք ունեին և բույսերի հետագա զարգացումն ընթացել է նորմալ (տես լուսանկար 1)։*

**Աղյուսակ № 1**

| Սորտի անունը | Ծագումը (ռեպրոդուկցիան) | Բույսերի բռնած տարածությունը $м^2$-ով | Տնկված պալարների թիվը | Աճած բույսերի թիվը | Ծիլերը երևալու ժամանակը-75% | Ծաղիկների երևալու ժամանակը |
|---|---|---|---|---|---|---|
| «Լոռի» | 1939 թ. ամռանը երիտասարդ պալարներով կատարված ցանքից ստացված մայրական պալարներ . . . . . . . . . | 18 | 100 | 93 | 11/V | 30/V |
| «Լոռի» | 1939 թ. գարնան ցանքից ստացված պալարներ . . . . | 18 | 100 | 100 | 10/V | » |
| «Լոռի» | 1939 թ. ամռան երիտասարդ պալարներով կատարած ցանքից ստացված պալարներ . . | 18 | 100 | 100 | 7/V | » |

*Ինչպես աղյուսակից երևում է, կարտոֆիլի տարբեր ծագում ունեցող պալարների ծիլերի հողից դուրս գալը և ծաղկումը տեղի է ունենում գրեթե միաժամանակ։ Սակայն անհրաժեշտ է նշել, որ կարտոֆիլի երիտասարդ պալարներով կատարած ցանքի ծիլերը հողի երես են դուրս գալիս սկզբում համեմատաբար դանդաղ, իսկ հետագայում այդ պրոցեսն արագանում է։*

*Փրերի թառամումն առաջին հերթին սկսվում է ամռան ցանքի մայրական և գարնան ցանքի պալարներից առաջացած բույսերից։ Ինչպես ամռան ցանքի մայրական, այնպես էլ գարնան ցանքի պալարներից առաջացած բույսերի մեծագույն մասը ասիմիլացիոն գործունեությունը դադարեցնում է հուլիսի կեսերին, մինչդեռ երիտասարդ պալարներով կատարված ցանքի բույսերը բերքահավաքի ժամանակ չեն թառամում և կանաչ են լինում։*

*Բերքահավաքը կատարվել է հուլիսի 17-ին և տվել է հետևյալ արդյունքը (տես աղյուսակ № 2)։*

*Աղյուսակի տվյալներից երևում է, որ երիտասարդ պալարներից ստացված բույսերի բերքատվությունը մեկ ու կես և երեք անգամ ավելի է քան գարնան ցանքի պալարներից և մայրական պալարներից առաջացած բույսերի բերքատվությունը։ Պիտի նշել, որ մայրական պալարների ռեպրոդուկցիայի բերքը երկու անգամ ավելի է գարնանային ռեպրոդուկցիայի բերքից։*

*Նախնական տվյալները մեզ համոզում են, որ կարտոֆիլի երիտասարդ պալարների ամռան ցանքից ստացված մայրական պալարները հնարավոր է երկրորդ անգամ օգտագործել գարնանը ցանելու համար։*

**Աղյուսակ № 2**

| Սորտի անունը | Ծագումը (ռեպրոդուկցիան) | Ցանքանյութի մոտավոր քաշը — գ. | Ցանքի վերջ — գրամ | Ամենից ցածր ջերմաստիճանի ազդեցության տակ մնացած գրամ | Ամենից բարձր ջերմաստիճանի ազդեցության տակ մնացած գրամ | Ամենից բարձր ջերմաստիճանի ազդեցության տակ մնացած % | Մի գրամի վրա մնացած գրամ | Ամենից ցածր ջերմաստիճանի ազդեցության տակ մնացած գրամ | Ցանքի վերջ — գրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| «Լորխ» | 1939 թ. ամռանը երիտասարդ պալարներով կատարած ցանքից ստացված մայրական պալարներ . . . . . | 18 | 86 | 186 | 16 | 16,5 | 487 | 35 | 14 |
| «Լորխ» | 1939 թ. գարնան ցանքից ստացված պալարներ . . . . . | 18 | 95 | 89 | 8,5 | 15,1 | 210 | 20 | 5 |
| «Լորխ» | 1939 թ. ամռանը երիտասարդ պալարներով կատարած ցանքից ստացված պալարներ . . | 18 | 91 | 265 | 24,2 | 17,4 | 293 | 90,4 | 9 |

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1 *Бурачинский А. М.*, „Яровизация“, №2, стр. 94 (1937 г.)

2 *Лысенко Т. Д.*, Подготовка свежеубранных клубней картофеля для летних посадок. „Коммунист“ №136, 12/VI 1941 г., г. Ереван.

3. *Прянишников Д. Н. и Якушкин И. В.*, Растения полевой культуры (частное земледелие), стр. 393. изд. СХГиз, Москва, 1936 г.

4. *Тер-Саакян Т. С.*, Новый метод снятия периода покоя у свежеубранных клубней картофеля. ДАН СССР, том XXXI, №2. Изд. АН СССР, Москва, 1941 г.

5. *Филимонов А. А.*, Выгонка раннего картофеля. Картофель. гл. IV, стр, 333—337. Изд. СХГиз, Москва, 1937 г.